ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

N /25.1/56682-2022

0051 ք. Երևան, Կոմիտաս 9/3
հեռ (+374 10) 93901

19.12.2022թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ՝ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ք. Երևան Փ. Բուզանդի փ. 1/3, 4-րդ հարկ,Էլ. փոստ՝ foi@foi.am)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն) էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով հասցեագրած 12.12.2022թ. Ձեր հ.350-78 գրությանԿ տեղեկացնում եմ, որ Գործակալության կողմից վարչական վարույթներ են հարուցվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.29 հոդվածի 1-ին մասով նախատեսված «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում **սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու հիմքով**:

ՎԻՎ օրենսգրքի 169.29 հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված հիմքերով Գործակալության կողմից վարչական վարույթներ չեն հարուցվել:

Հարկ է նշել, որ Գործակալությունն իրականացնում է ընթացիկ վերահսկողություն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների

արժանահավատության ապահովման նպատակով և դեռևս, իր նախաձեռնությամբ, նշված տեղեկությունների արժանահավատության ստուգման հիմքով վարույթ չի հարուցել: Նշեմ նաև, որ Գործակալությունը չի ստացել պետական մարմինների կողմից իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության առնչությամբ կասկածներ հայտնաբերելու մասին ծանուցում, կամ որևէ դիմում իրական շահառուների հայտարարագրման՝ օրենքով նախատեսված պահանջների պահպանումն ստուգելու վերաբերյալ:

Տեղեկացնում եմ նաև, որ 2021 թվականի ընթացքում շուրջ 150 իրավաբանական անձանց նկատմամբ, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պարտականությունը չկատարելու հիմքով Գործակալության կողմից հարուցվել են վարչական վարույթներ: 15 իրավաբանական անձի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում, 130 իրավաբանական անձի նկատմամբ, հայտարարագիրը ներկայացնելու հիմքով կիրառվել է խրախուսական նորմ, և վարչական վարույթը կարճվել է:

2022 թվականին Գործակալության կողմից հարուցվել է 1118 վարչական վարույթ, որոնցից շուրջ 300-ը կարճվել են՝ իրավախախտումը վերացնելու հիմքով, 115 իրավաբանական անձի նկատմամբ կիրառվել է նախազգուշացում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե քանի տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձ է ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր և քանիսը չեն ներկայացրել, ապա հայտնում եմ, որ գործող էլեկտրոնային ծրագիրը դեռևս հնարավորություն չի տալիս հայցվող տեղեկատվությունը գեներացնելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

Տաթև
Մկրտչյան
Signed by: Tatev Mkrtchyan

ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ.՝ Հռիփսիմե Իսկանդարյան
Հեռ.՝ 010 20 14 38